



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան
անդրադառնալ ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության
համար:**

1 №1 ձևի անասնաբուժական վկայականը տրվում է՝ (1 միավոր)

- 1) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքի (մսի, կաթի, ձվի, մեղրի) համար:
- 2) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող հումքի (բուրդ, մորթեղեն, մազ, փետուրներ, էնդոկրիին գեղձեր, աղիքներ) համար:
- 3) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող կերերի (լրացակերեր, մսայուր, ոսկրայուր) համար:
- 4) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանիների, բեղմնավորված ձկնկիթի, ինկուբացիոն ձվի, սերմնահեղուկի համար:

2 Անասնաբուժական գրանցման ինչպիսի՞ մատյան չկա: (1 միավոր)

- 1) համաճարակային
- 2) ոչ վարակիչ հիվանդությունների
- 3) կենդանիների զբոսանքի
- 4) հակահամաճարակային

3 Ո՞ր կենդանիներն են խլախտով հիվանդանում: (1 միավոր)

- 1) մանր եղջերավորները
- 2) ձիերը
- 3) խոզերը
- 4) խոշոր եղջերավորները

4 Ո՞ր տարբերակում են 2 երևույթներն էլ համապատասխանում դաբաղ հիվանդությանը և նրա հարուցիչին: (1 միավոր)

- 1) բարձր վարակելիություն, ցածր մահացություն
- 2) ցածր վարակելիություն, բարձր մահացություն
- 3) ցածր վարակելիություն, ցածր մահացություն
- 4) բարձր վարակելիություն, բարձր մահացություն

5 Հետևյալներից ո՞րն է համարվում վարակիչ հիվանդությունների բուժման լավագույն միջոցը: (1 միավոր)

- 1) ֆիզիոլոգիական լուծույթի ներերարկային ներարկումը
- 2) մեծ քանակի թորած ջուր խմեցնելը
- 3) վիտամինային բուժումը
- 4) գերիմուն շիճուկի ենթամաշկային ներարկումը

6

Հետևյալներից, ո՞րը համաճարակային պրոցեսի զարգացման պարբերականության փուլ չէ: (1 միավոր)

- 1) հիվանդության դեպքերի զարգացման կուլմինացիոն կետը
- 2) հիվանդության դեպքերի քանակի նվազումը
- 3) հիվանդության իսպառ վերացումը
- 4) հիվանդության դեպքերի ավելացումը

7

Տրված հիվանդություններից ո՞րի հարուցիչը հողային չէ: (1 միավոր)

- 1) փայտացման
- 2) բոտուլիզմի
- 3) կոլիբակտերիոզի
- 4) սիբիրախտի

8

Հետևյալներից ո՞րն է համարվում կենդանիների վարակիչ հիվանդությունների առանձնահատուկ կանխարգելման միջոցառում: (1 միավոր)

- 1) պատվաստումը
- 2) որոշ ժամանակով չշահագործումը
- 3) մեկուսացումը
- 4) հատուկ եղանակով կերակրումը

9

Հետևյալներից ո՞րը համաճարակային օջախի տեսակ չէ: (1 միավոր)

- 1) ստացիոնար
- 2) բնական
- 3) փոփոխական
- 4) հանգչող

10

Տարբեր տեսակի ձկների համատեղ բուժման դեպքում դրանց ո՞ր առանձնահատկությունը հաշվի չի առնվում: (1 միավոր)

- 1) տեսակային
- 2) տարիքային
- 3) սեռային
- 4) սննդային

11 Ո՞րը մեղունների հիվանդությունն չէ: (1 միավոր)

- 1) նոզեմատոզը
- 2) պիեմիան
- 3) պարկավոր մեղվատրդը
- 4) ամերիկյան փտախտը

12 Հետևյալներից ո՞րը հելմինթոսովոսկոպիկ մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) Ֆյուլերբոնի
- 2) Դատլինգի
- 3) Քալանթարյանի
- 4) Վայդի

13 Դիսպանսերացումը՝ (1 միավոր)

- 1) եզրակացություն է հիվանդության ելքի մասին:
- 2) պլանային կարգով անցկացվող ախտորոշիչ, բուժկանխարգելիչ միջոցառումներ են:
- 3) հյուսվածքաբանական հետազոտություններ են:
- 4) վերքի մանրագնին հետազոտություն է:

14 Ի՞նչ է կոչվում բարակ աղիքների կերպանգվածի կանգը: (1 միավոր)

- 1) լիմֆոստազ
- 2) խիմոստազ
- 3) խոլիստազ
- 4) կոպրոստազ

15 Ո՞րը բրոնխոպնևմոնիային բնորոշ ախտանիշ չէ: (1 միավոր)

- 1) շնչահեղձությունը
- 2) սիրտանոթային անբավարարվածությունը
- 3) լորձաթաղանթների դեղնությունը
- 4) չոր կամ խոնավ հազը, խզզոցը

16 Հետևյալներից ո՞րին է բնորոշ ցավագին միզարտազատությունը: (1 միավոր)

- 1) ուրոցիստիտին
- 2) էնդոմետրիտին
- 3) նեֆրիտին
- 4) նեֆրոսկլերոզին

17 Ո՞ր կենդանու հղիության միջին տևողություն է 340 օր: (1 միավոր)

- 1) գոմեշի
- 2) գամբիկի
- 3) ուղտի
- 4) կովի

18 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված ծննդաբերության հաջորդականությունը: (1 միավոր)

1. արգանդի վզիկի բացում, 2. ընկերքային փուլ, 3. պտղի արտաքսում

- 1) 2, 1, 3
- 2) 1, 3, 2
- 3) 3, 2, 1
- 4) 1, 2, 3

19 Ինչպե՞ս են վարվում պայմանական պիտանի մսեղիքի հետ: (1 միավոր)

- 1) այրում են
- 2) վերամշակում են
- 3) բաց են թողնում վաճառքի առանց սահմանափակումների
- 4) օգտահանում են

20 Ըստ վիճակագրական տվյալների՝ հետևյալ կենդանական տեսակներից ո՞րի ցիստիցերկոզով վարակված մսեղիքից է մարդն առավել հաճախ վարակվում: (1 միավոր)

- 1) խոզի
- 2) ոչխարի
- 3) ճագարի
- 4) տավարի

21 Հետևյալներից ո՞րն ախտահանության մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) կարանտինացման
- 2) Ֆիզիկական
- 3) կենսաբանական
- 4) քիմիական

22 Հետևյալներից ո՞րն է դեղանյութերի ներմուծման պարենտերալ ուղին: (1 միավոր)

- 1) ենթալեզվային
- 2) ենթամաշկային
- 3) ուղիղ աղիքային
- 4) բերանային

23 Մենդանյութերի այն քանակությունը, որը նախատեսված է կենդանու մեկ օրվա պահանջը բավարարելու համար կոչվում է՝ (1 միավոր)

- 1) կենսաբանական ակտիվություն
- 2) կերակրման նորմա
- 3) բտում
- 4) սնուցում

24 Ինչո՞վ է պատված ոսկորի արտաքին մակերեսը: (1 միավոր)

- 1) շարակցահյուսվածքային ամուր շապիկով
- 2) ֆիբրոզային թիթեղներով
- 3) սպունգաձև նյութով
- 4) աճառային հյուսվածքով

25 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված որոճողների կրծքային վերջույթների հետևյալ հոդերի տեղադրման հաջորդականությունը: (1 միավոր)

1. արմունկ, 2. կապ, 3. պսակ, 4. դաստակ

- 1) 2, 1, 4, 3
- 2) 1, 4, 2, 3
- 3) 4, 2, 3, 1
- 4) 1, 2, 3, 4

26 Ո՞ր հորմոնն է կարգավորում վահանազեղձի ֆունկցիան: (1 միավոր)

- 1) պրոլակտին
- 2) օքսիտոցին
- 3) թիրեոտրոպ
- 4) ադրենոկորտիկոտրոպ

27 Ի՞նչ է ռեֆլեքսը: (1 միավոր)

- 1) Օրգանիզմի պատասխան ռեակցիան է գրգռիչների նկատմամբ:
- 2) Գրգռիչի ազդման պահից մինչև պատասխան ռեակցիան ընկած ժամանակն է:
- 3) Նյարդային բջիջների ընդհանուր գործնեությունն է:
- 4) Ընկալչական դաշտը կազմող ընկալիչների միագումարումն է:

28 Հետևյալներից ո՞րն է մարսողական օրգանների տեղադրման ճիշտ հաջորդականությունը: (1 միավոր)

1. բարակ աղիք, 2. ըմպան, 3. հաստ աղիք, 4. ստամոքս

- 1) 4, 2, 1, 3
- 2) 4, 1, 2, 3
- 3) 2, 4, 1, 3
- 4) 2, 4, 3, 1

29 Ո՞ր դեպքում է դրվում պատուհանավոր զիպսային կապ: (1 միավոր)

- 1) սալջարդի
- 2) ոսկրահոդախտի
- 3) օստեոարթրոզի
- 4) բաց կոտրվածքի

30 Հետևյալներից, ո՞րը դեկորատիվ կենդանի չէ: (1 միավոր)

- 1) շինշիլան
- 2) ծովախոզուկը
- 3) ճահճային առնետը
- 4) գերմանական մուկը

31 Կենդանիների հետևյալ 3 հիվանդությունների հարուցիչները *չեն* փոխանցվում մարդուն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. խշխշան պալարի
2. մաշկի հանգուցային բորբոքման (նոդուլար)
3. սալմոնելոզի
4. սիբիրախտի
5. բրուցելոզի
6. աֆրիկյան ժանտախտի
7. տուբերկուլոզի

32 Տրված հատկանիշներից 3-ը *չեն* վերաբերում խշխշան պալարի հարուցիչին: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. գրամ դրական
2. սպորավոր
3. պատիճավոր
4. պարուրաձև
5. անաերոբ
6. հողային
7. մտրակավոր

33 Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդություններ *չեն* կարող ախտորոշվել: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. վիրուսաբանական
2. շոշափման
3. մանրէաբանական
4. համաճարակաբանական
5. ուլտաձայնային
6. շիճուկաբանական
7. բախման

34

Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդությունների հարուցիչները չեն թափանցում կենդանու օրգանիզմ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. եղջրանյութի
2. բերանային
3. քրտնագեղձի
4. շնչուղիներով
5. միզուղիներով
6. սեռական
7. վերմաշկային

35

Տրվածներից 3-ը արու կենդանիներին ամորձատելու եղանակներ չեն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. մեխանիկական
2. կենսաբանական
3. խարելով
4. բաց
5. արյունային
6. քիմիական
7. ճառագայթային

36

Տրվածներից 3-ը սիբիրախտով կասկածվող մսեղիքի հետ սպանդի ընթացքում վարվելու վերաբերյալ ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Մսեղիքը ջերմամշակում են:
2. Մսեղիքը վերամշակում են կերակրի աղի միջոցով:
3. Ոչնչացնում են մսեղիքը այրման միջոցով:
4. Ուղարկում են օգտահանության:
5. Վերցվում են կենսասնունոշներ և ուղարկում են լաբորատոր հետազոտության:
6. Մսեղիքը տեղափոխում են խորը սառեցման:
7. Դադարեցնում են սպանդը:

37 **Տրվածներից 3-ը մաստիսների տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. ֆիբրինոգային
2. դերմատիտային
3. հետաճ
4. կատարային
5. ինդուրացիոն
6. թարախային
7. գանգրենային

38 **Վիժաճ պտուղները համարվում են ախտաբանական նյութ, եթե կենդանիները հիվանդանում են հետևյալ հիվանդություններից 3-ով: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կատաղություն
2. բոտուլիզմ
3. լեպտոսպիրոզ
4. բրուցելոզ
5. խշխշան պալար
6. պաստերելոզ
7. կամպիլոբակտերիոզ

39 **Հետևյալ վիրուսային հիվանդություններից 3-ով կարող են վարակվել հավերը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. միկոպլազմոզոզ
2. մարեկոզ
3. պաստերելոզոզ
4. գրիպոզ
5. լեյկոզոզ
6. սալմոնելոզոզ
7. կոլիբակտերիոզոզ

Հետևյալներից 3-ի վնասագերծման նպատակով կիրառվում է իվերմեկտին պատրաստուկը: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. սնկերի
2. արոտային տզերի
3. նախակենդանիների
4. միկրոբների
5. վիրուսների
6. կլոր որդերի
7. քոսի տզերի